

# ԿԱՊԻՏԱԼ

ԲԻԶՆԵՍ ՕՐԱԹԵՐԹ

Թիվ 10 (54)  
2 փետրվար, 2008թ.

## Արտահանման կառուցվածքը մատնանշում է հիմնարար խնդիրների առկայությունը

*Աննա Մակարյան. «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն*

### Տեսակետ

Երկրի արտահանման կառուցվածքը և դինամիկան երկրի մրցունակության կարևորագույն ցուցիչներից են: Արտահանման ոլորտում վերջին հինգ տարիների միտումները մատնանշում են հիմնարար խնդիրների առկայությունը: 2007թ. ապրանքների արտահանման կառուցվածքում պահպանվեցին 2006թ. բացասական միտումները, քանզի արտահանման մոտ 80%-ը բաժին էր ընկնում չորս հիմնական ապրանքային խմբերի, 49% էր կազմում հանքահումքային արտադրանքը, ոչ թանկարժեք մետաղներն ու դրանցից պատրաստված իրերը, 18%-՝ թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղներն ու դրանցից պատրաստված իրերը, 12%՝ պատրաստի սննդի արտադրանքը, իսկ 2002-2006թթ. այս նույն ապրանքային խմբերի տեսակարար կշիռը 80 և ավելի տոկոս էր կազմում:

Կարելի է եզրակացնել, որ նմանատիպ կառուցվածքով կատարվող արտահանումը խոցելի է, ինչով էլ մասամբ պայմանավորված է ադամանդի արտահանման ծավալների կրճատումը, հանքահումքային ապրանքների և ոչ թանկարժեք մետաղների ծավալների աճը արտահանման ժամանակ: Նշենք նաև, որ 2007թ. ապրանքների արտահանումը կազմել էր \$1157.4 մլն՝ գերազանցելով 2006թ. տարեկան արտահանման ծավալը 17.5%: Այս հիմնական ապրանքատեսակների նկատմամբ պահանջարկի փոփոխություններն ու գների տատանումները համաշխարհային և ռուսաստանյան շուկաներում կշարունակեն մեծապես կանխորոշել ՀՀ արտահանման ծավալների դինամիկան կարճաժամկետ հեռանկարում:

Հեղինակավոր կազմակերպությունների հրապարակումների համաձայն՝ կանխատեսվում է այս ապրանքատեսակների գնաճ: Համաշխարհային շուկաներում ոչ թանկարժեք մետաղների գների բարձրացման հետևանքով աճել էին ՀՀ արտահանման ծավալները: Ըստ Economist Intelligence Unit-ի (EIU, 2008թ.) Հայաստանին վերաբերող զեկույցի՝ 2008-2009թթ. ակնկալվում է այս ապրանքային խմբի հիմնական ապրանքատեսակների գների և սպառման ծավալների աճ, հետևաբար, գների բարձրացումները կնպաստեն ոչ թանկարժեք մետաղների արտահանման ծավալների զգալի աճին, իսկ ադամանդի ծավալների կրճատումը պայմանավորված է համաշխարհային շուկաներում վերջինիս ցածր պահանջարկով:

«Շողակն» ընկերությունը 2007թ. սեպտեմբերին աշխատում էր իր հզորությունների ոչ լրիվ ծավալով՝ կրճատելով իր 1500 աշխատակիցների մեծ մասին, սակայն ակնկալվում է, որ այս ոլորտում դրական տեղաշարժ կնկատվի, քանի որ 2007թ. օգոստոսին ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը պայմանագիր է կնքել ռուսական առաջատար «Ալթոսա» ընկերության հետ, որի շրջանակներում նախատեսվում է, որ չորս ադամանդ մշակող ընկերությունների կտրամադրվեն անմշակ ադամանդներ, որոնք վերամշակումից հետո կարտահանվեն Ռուսաստան: Սրա հետևանքով 2008թ. մշակված ադամանդի ծավալների աճ կնկատվի, ինչին կնպաստի նաև ադամանդի նկատմամբ համաաշխարհային պահանջարկի աճը:

EIU կանխատեսման համաձայն՝ 2008թ. սպասվում է սննդամթերքի համաաշխարհային գների աճ, ինչն էլ իր հերթին կնպաստի պատրաստի սննդամթերքի արտահանման ծավալների աճին, և քանի որ այն հիմնականում պայմանավորված է ոգելից և ոչ ոգելից խմիչքների արտահանմամբ, ապա ռուսական շուկայում հայկական կոնյակի նկատմամբ պահանջարկը կորոշի ապագա արտահանման ծավալների աճի տեմպը՝ չնայած, որ Հայաստանի արտահանումը 2006թ. նախորդ տարվա համեմատ նվազել էր \$11.7 միլիոն՝ ի տարբերություն 2007թ. պատրաստի սննդի արտադրանքի արտահանման, որը նախորդ տարվա նկատմամբ աճել էր 52%, իսկ 2006թ. ռեսուրսահինտենսիվ արտահանումը կազմել է 69.5%, որը, կարելի է ասել, բարձր ցուցանիշ է: Այս ամենն այն բանի վկայությունն է, որ Հայաստանի արտահանումը չի ստեղծում բարձր ավելացված արժեք: Այս ապրանքատեսակներից կախումը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է զարգացնել բարձր ավելացված արժեք ստեղծող ոլորտները(բարձր և միջին տեխնոլոգիական), որոնք կնպաստեն արտահանման դիվերսիֆիկացմանը: Սա ենթադրում է համալիր մոտեցում՝ հիմնված մասնավոր և հանրային հատվածների արդյունավետ համագործակցության վրա: